ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբեր 2022

Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 3

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5

Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2022թ.-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 174.23 մլրդ դրամ՝ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճելով 4.6%-ով, իսկ 2022թ.-ի Նոյեմբերի նկատմամբ աճելով 1.1%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2022թ.-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 135.15 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Դեկտեմբերի նկատմամբ աճելով 7.7%-ով, իսկ 2022թ. Նոյեմբերի նկատմամբ՝ 1.9% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2022թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 60.7 մլրդ դրամ՝ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճելով 14.0%-ով, իսկ 2022թ.-ի Նոյեմբերի նկատմամբ՝ 0.7%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2021-2022թթ. Դեկտեմբերի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2022թ.-ի Դեկտեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 11.6 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 5.9նվազել է %-ով, իսկ 2022թ.-ի Նոյեմբերի նկատմամբ աճելով 20.7%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2021 և 2022 թթ.-երի Հունվար-Դեկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2022թ.-ի Դեկտեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 37,678 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 9.7%-ով, իսկ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 44.3%-ով (Գծ. 3):

- 2022թ.-ի Դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 158,420 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճել է 8.2%-ով, իսկ 2022թ. -ի Նոյեմբերի նկատմամբ՝ 1.8%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2022թ.-ի Դեկտեմբերին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 307 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 853 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2021թ.-ի Դեկտեմբերին կազմել են համապատասխանաբար՝ 470 և 857-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2021 և 2022 թթ.-երի Հունվար-Դեկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2022թ.-ի Դեկտեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 155 մասնաճյուղ, որը, համեմատած 2021թ.-ի Դեկտեմբերի հետ, նվազել է 3-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2022թ.-ի Դեկտեմբերի դրությամբ ունեցել են 469 վարկային մասնագետ, որը, համեմատած 2021թ.-ի Դեկտեմբերի հետ, նվազել է 67-ով:
- 2022թ.-ի Դեկտեմբերին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 24.64 մլն դրամ, նախորդ ամսին՝ 20.12 մլն դրամ, իսկ 2021թ.-ի Դեկտեմբերին այս ցուցանիշը կազմել է ևս 22.91 մլն դրամ (Գծ. 5):
- 2022թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 288.16 մլն դրամ, նախորդ ամսվա 278.56 մլն դրամի և 2021թ.-ի Դեկտեմբերին 234.10 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2022թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1,116 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,647 մլն դրամ և 2021թ.-ի Դեկտեմբերին՝ 1,246 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 10.5%-ով, իսկ 2022թ.-ի Նոյեմբերի նկատմամբ՝ 32.3%-ով: 2022թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 0.83%-ը, 2021թ.-ի Դեկտեմբերին ևս կազմել է 0.99% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2022թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,342 մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,357 մլն դրամ և 2021 թ.-ի Դեկտեմբերին՝ 3,523 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 5.1%-ով, իսկ 2022թ.-ի Նոյեմբերի նկատմամբ՝ 0.4%: 2022թ.-ի

Դեկտեմբերի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.47%-ը, 2021թ.-ի Դեկտեմբերին՝ 2.81% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2022թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 1,759 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,629 մլն դրամ և 2021թ.-ի Դեկտեմբերին՝ 14,341 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2022թ.-ի Դեկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 8.0%-ով, իսկ 2021թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ նվազել է 87.7%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Դեկտեմբերի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 1.30%-ը, նախորդ ամսվա 1.23%-ի և 2021թ.-ի Դեկտեմբերի 11.43%-ի համեմատ (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Դեկտեմբերի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2022թ.-ի Դեկտեմբերի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 77.6%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Դեկտեմբերին կազմել է 75.3% (Գծ. 7):

- Սույն թվականի Դեկտեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 44.9%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 45%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Դեկտեմբերին կազմել է 42.4% (Գծ. 7):
- 2022թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 34.8%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2021թ.-ի Դեկտեմբերին կազմել է 32.0% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2022թ.-ի Դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.87, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.9 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Դեկտեմբերի համար կազմել է 2.13:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
40,000.0
38,000.0
36,000.0
34,000.0
32,000.0
30,000.0
28,000.0
26,000.0
24,000.0
22,000.0
20,000.0
18,000.0
16,000.0
14,000.0
12,000.0
10,000.0
8,000.0
6,000.0
4,000.0
2,000.0
-
26,110
23,094
24,271
28,515
26,805
26,675
28,112
23,917
25,687
25,393
27,323
34,350
37,678
Dec-21
Jan-22
Feb-22
Mar-22
Apr-22
May-22
Jun-22
Jul-22
Aug-22
Sep-22
Oct-22
Nov-22
Dec-22


Ժամկետանց վարկերի դինամիկան 12/2021-12/2022
PAR 1-30 days
PAR more than 30 days
4,000,000
3,000,000
2,000,000
1,000,000
-
Dec-21
Jan-22
Feb-22
Mar-22
Apr-22
May-22
Jun-22
Jul-22
Aug-22
Sep-22
Oct-22
Nov-22
Dec-22